

## Խ Օ Ս Ք Ռ . Ս Ե Ի Ա Կ Ի

### ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ ՕՏԷՅՈՆ ԹԱՏՐՈՆԻՆ ՄԷՁ

Թո՛ղ ներէ ինձ հոս ներկայ հայ հասարակութիւնը որ յանդրդնութիւնը կ'ունենամ խօսք առնելու այս դիշեր թատերական այս պերճ սրահին մէջ, ազգասէրներու խանդավառ խումբի մը առջեւ, առանց մասնաւոր պտտրաստութեան, առանց խոր ուսումնասիրութեան, Եւրոպայէն նոր ժամանած, ճամբորդութեան փոշիները դեռ վրաս: Հաւ կ'ըլլար անշուշտ որ այս դիշեր քառորդ դարէ մը ի վեր մեռելօրէն թաղուած մեր թրքահայ թատրոնին հայաբարբառ զարթնումը բացուէր արժանաւոր ու ծանր նախաբանով մը, եւ Հայ դեռաստի դերասանի՝ Պարոն Փափաղեանի ձեռքէն բոնող եւ բեմ բերողը մեր հիներէն մէկը ըլլար: Բայց պարագան ինքնին այնքա՛ն գեղեցիկ է որ մարդ առանց հիմ մը, կամ թատերական մասնադէտ մը ըլլալու, առանց իսկ երկար ու քրտնաջան ուսումնասիրութեան, կրնայ սրբատարուի քանի մը բաւեր արտասանել՝ պարզ ու անյուակնոտ բառեր՝ որոնք Հայ թատրոնին նուիրուող երիտասարդ տաղանդի մը առաջին քայլերը պիտի բանան:

Նուիրական պարտականութիւն մը ունիմ հրատարակով կատարելու: Անկեղծ շնորհակալութեան այն պարտքը զոր արուեստագէտներու նորակազմ այս խումբը կը դնէ իմ վրաս արտայայտելու Ձեզ: Ձե՛ղ որ այնքան սիրով եկաք քաջալերել ընդհանրապէս ամբողջ նորաստի խումբը, ու մասնաւորապէս իր թատերապետը Պարոն Փափաղեան՝ որ դեռ այնքա՛ն երիտասարդ՝ չի վարանիր Օթէլլոյի նման դժուարին ու գրեթէ անմատչելի դեր մը անձնաւորելու: Հարկաւ ներողամիտ աչքով պիտի դիտէք խումբին մնացեալ մասը՝ որոնք եթէ չունէին իսկ արուեստագէտի մեծ պատրաստութիւն, ունէին

զոնէ կամքի մեծ ուժ եւ բեմի զօրաւոր սէր՝ անզոսնելով ամէն զժուարութիւն՝ իր աճիւններէն ծնցնելու համար մեր այնքան սիրելի հայաբարբառ ու հայաշունչ թատրոնը :

Թատրոնը, հայաշունչ թատրոնը... : Այն թատրոնը զոր Հիւրմեաններ, Պէշիկթաշիեաններ, Թէրղեաններ, Թղլեաններ, Շիրվանդատէներ կանգնեցին... : Եւ այն թատրոնը զոր Վարդուիեաններ, Գարագաշեաններ, Ֆառուկեաններ, Սիրանոյշներ, Մնակեաններ փառաւորեցին... : Եւ այն թատրոնը ուր Թրեանցներ, Ռշտունիներ, Աղամեաններ անմահացան... : Թատրոնը, հայաշունչ թատրոնը, մե՛ր թատրոնը... :

Ո՛հ, փառաւոր հայ անուններու ոսկեձոյլ համաստեղութիւնը... :

Ու բնա՛ւ զարմանալի չէ որ մեր մէջ ուր այնքան ապերախտ ու այնքան թշուառ նկատուած է այս բեմի ասպարէզը, — մե՛ր մէջ՝ համեմատօրէն բոլոր միւս արուեստագիտական ասպարէզներուն՝ — ամէնէ՛ն աւելի ուռճացող ու պտղաբերող ճիւղը թատրոնը եղած ըլլայ միշտ : Ասիկա ունի իր սրուշ պատճառները :

Ամբողջ Եւրոպայի մէջ, աշխարհի էն շքեղ կեդրոններէն մինչեւ ամենամութ ու խաւարին անկիւնները՝ ես չեմ տեսեր ու չեմ ալ կրնար հաւատալ որ դոնուի տակաւին մէկ ուրիշ ազգ՝ որ ամէն օր ու ամէն վայրկեան ապրէր դերասանի ճշմարտապէս կեղծ ու գերեղմանօրէն ծիծաղելի այն կեանքը որ զարեբէ ի վեր մեր կեանքը եղաւ, մեր, ստրկացած թրքահայերու կեանքը... : Տառապի՛ւ, ու ստիպուած ըլլալ ամենաերջանիկ կերպարանք մը ցոյց տալու... : անպատուութիւ, բռնաբարութիւ, դետնաքարչ տապալիւ, ու ստիպուած ըլլալ գոհութեան ջերմագին աղաղակներ բարձրացնելու... : Ժպտի՛ւ այնպիսի մէկ վայրկեանիդ ուր արիւն արցունք պիտի պոթկար աչերէդ... : մաղթանքի ճիշեր հանել կոկորդէդ այն բռնակալ ձեռքին համար որ զքեզ կը խեղդէ... : մեռնի՛ւ — հողեպէս մեռնիւ — ու ապրիւ ձեւացնել... : Եւս դերասանական ահուկութիւն կեղծ կեանքը, որ մե՛րը եղաւ այնքա՛ն երկար տարիներ... : Արդ ինչպէ՞ս կ'ուզէիք որ այսպիսի պայմաններու մէջ, ժառանգօրէն ու բնածինօրէն մեր ամենամանկեղծ յատկութիւնը մեր կեղծելը չըլլար, ու մեր բնական յարմարութիւնը՝ դերասանութիւնը... :

Այդի մը թատրոնին յաջողութեան համար կա՛յ տակաւին մէ՛կ երկրորդ պայման. : Եւ այն է թատրերգութեան նիւթը, պատմուածքին առանցքը, խաղին կմախքը : Արդ մոռցէք անգամ մը ներկան. : վայրկեան մը դէպի ետ երթանք, մեր ժողովրդեան կեանքին պատմու-

Թնան մէջ, ե'տ, շա'տ ետ, մինչև Յիսուսի ժամանակները, ու ան-  
կէ'ց ալ ե'տ՝ մինչև մեր հեթանոսական շրջանները: Անցեալի մշու-  
շին մէջ թաղուած այդ սակեկուռ բարձունքներէն դիտենք անդամ մը  
լեռն ի վար սողոսկող այն ահաւոր ու արիւնլուայ ճամբան որ մեր  
ազգինն է: Ի'նչ ազաւոր դասեր, ի'նչ հսկայ ատաղձներ թատերադրի  
մը համար՝ այդ պատմութեան դանազան էջերուն մէջ: Մեր ամէնուս  
հայր Հայկէն մինչև մեր օրերը, դիցաբանական հիանալի աւան-  
դավէտերու քով ի'նչ ահաւոր իրականութիւններ...: Ու Արշակը,  
ու Վասակը, ու Քաջ Վարդանը, ու Մեծն Արտաշէսը...: Ու տա-  
կաւին նո'ր, դեռ շատ նոր, մեր ամէնուս օրտին մէջ արիւնոզ յի-  
շատակները այն ահակի կոտորածներուն(\*) որոնք մահը ու սար-  
սափը ու սոփը ցանկցին մինչև Ակնայ սարսափահար հովիտները,  
Վանայ արիւնտների լիճէն մինչև Ոսկեղջիւրի հայակուլ անդունդ-  
ները...:

(\*) Ետքը 1895-6-ի Գիլիկիոյ ջարդերուն մասին է:

Այդպիսի, գուտ ազգային թատրոնի մը համար ինչ ատաղձ-  
ներ, ի'նչ հերոսներ, ի'նչ նիւթեր...: Թաւարչտին բանտերու մէջ  
ժողովուրդէն անդիտուած, մարդկութենէ վատօրէն լքուած «Ազա-  
տաւքիւն» հեծկլտալով քանի-քանի մեռնողներ, զորս Հայ բեմը պիտի  
անմահացնէր՝ անձնութեան դասը տալու համար ժողովրդը-  
կան...: Ու ամէն տեղ, յաւիտենական սարսափի ու սպանալիքի  
տակ՝ դիցադիւորէն ու լուսօրէն գործող քանի վեհանձն կեանքի՝  
զոր Հայ թատերգութիւնը բեմ պիտի հանէր՝ մեղի հերոսաբար մեռ-  
նիլ սորվեցնելու համար...: Ու դեռ ինչե'ր, ու դեռ ինչե'ր...:

Ո՛հ... ո՛չ... դժբախտաբար նիւթերը չէ որ կը պակսին հիմ-  
նելու համար ջղուտ ազգային թատրոն մը: Եւ ահա թէ ինչո՞ւ ես այս  
դիչեր համեատօրէն պիտի ուզէի յանդիլ սա դադափարին թէ օտար  
թատերախաղերէ աւելի — զոր մեր ժողովուրդը չի՛ կրնար ըմբռնել  
— պէտք է Հայութիւնը իր ծոցէն ծնի Հայ թատրոն մը, Հա'յ, ոչ  
միայն լեզուով, այլ ոգիով ալ, նպատակով ալ...:

Հայ թատրոն մը՝ Հայ իրականութեան համար:

Կեցցէ՛ հայութիւնը, կեցցէ՛ թատրոնը:

Բերա, 22 Օգոստոս 1908